

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՍԳՈՒՄԸ ԵՎ ՀՆՉԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հին հայերենում, ըստ տարբեր ուսումնասիրությունների, առանձնացվում է 5-7 ձայնավոր հնչույթ: Ձայնավորների այդպիսի թվային տատանումը հիմնականում պայմանավորված է *է*-ին և *ու*-ին վերագրվող հնչաբանական (իմա՝ հնչույթաբանական և հնչյունաբանական) արժեքներով, այն է՝ մաշտոցյան այբուբենում այդ գրերով նշանակված հնչույթները եղել են պարզ ձայնավորներ, թե՛ ունեցել են երկբարբառային բնույթ: Մասնավոր կարծիք է արտահայտվել նաև *ը* (օ)-ի հնչաբանական արժեքի վերաբերյալ¹: Հ. Հյուբշմանը հայերեն տառադարձումներում *n*(*լ*)-ով է նշանակել (ըստ ամենայնի՝ պայմանականորեն) օտար (օր.՝ հունարեն) բառերի երկար *ō*(*ω*)-ն²:

Տարակարծություններ չկան *ա* (*a*), *ե* (*e*), *ի* (*i*), *ո* (*o*) հնչույթների հնչաբանական արժեքների առնչությամբ. հայերենագիտության մեջ առկա ընդհանրական պատկերացման համաձայն՝ այդ գրերով մաշտոցյան այբուբենում նշանակվել են պարզ և լիարժեք ձայնավորներ: Ըստ այդմ համեմատաբանական գրականության մեջ *հ*-*ե*. նախալեզվի և հայերենի ձայնավորական համակարգերի միջև նշվում են հետևյալ համապատասխանությունները.

1. **Ա** (*a*)-ն սերել է *հ*-*ե*. հետևյալ նախաձևերից. *ա*) ***a**-ից (հմմտ. **ay*->*ազանիմ* «զիշերել», **alēuro*-?>*ալելր*, **ayei*->*հալ* (թոշուն), **amōr*->*ալր* (օր), **bal*->*պալ* «ժայռ», **k^har* > *քար* ևն). *բ*) ***ā**-ից (հմմտ. **ātēr*->*այրեն* «վառում եմ» (պիլ. *atarš* «կրակ»), **bhrā ter*->*եղբայր*, **nāu*->*նալ*, **tā*->*դա* «այդ»). *գ*) ***o**-ից (հմմտ. **do*->*տալ* «տալիս եմ», **ok^h-n*->*ակն* «աչք» (սեռ. **ok^hnos*> *ակն*) ևն). *դ*) ***ə**-ից (հմմտ. **ə*-*mensos*->*ամիս*(-ոյ), **g enə*->*ծնա*-*լ*-*տ*, **g enətlo*->*ծնալո*, **pətér*->*հայր*, **mənu*->*մանր* (սեռ. *մանու*) ևն). *ե*) ***ɛ**-ից (հմմտ. **bhɛrug*->*երրուծ* «կուրծք», **g ɛlō*->*ծաղր* (-ու), **g^hɛn-ai*-(<**g^henā*)>*կանայք*, **ɛmā*->*ամ* «տարի», նաև *amaɪn* «ամառ», **ɛrēn*->*զարն* ևն)³:

¹ Տե՛ս **Март Н.** Грамматика древнеармянского языка. СПб., 1903, էջ 24-25, **Է. Բ. Աղայան**, Գրաբարի քերականություն, գ. I, Եր., 1964, էջ 83-88:

² Տե՛ս **Հայերի ձայնավորներ**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 166:

³ **ə*-ով նշանակվում է *հ*-*ե*. առաջին շվան, որն «իրենից ներկայացնում է երկար ձայնավորների թուլացած աստիճանը», իսկ **ɛ*-ով նշանակվում է *հ*-*ե*, երկրորդ շվան, որը արտացոլում է կարճ ձայնավորների թուլացած աստիճանը (տե՛ս **Семереньи О.** Введение в сравнительное языкознание. М., 1980, էջ 51):

Որոշ դեպքերում *u*-ն *h*-ե. վանկարար ձայնորդի՝ հայերենում վանկարարության հասկանիչի կորուստի արդյունք է (հմմտ. **m̥*-*to*->*մառդ* (-*ոյ*), **pr̥k*'->*հարսն*, **pt̥r*-*g*->*թարկ*):

2. Ե (*e*)-ի համար վերականգնվում է մեկ նախաձև՝ *h*-ե. **e*-ն (հմմտ. **bel*->*պեղ*-(եմ), **bhel*-*mn*>*բեղմն*, **bhere*->*բերեմ*, **bherg*'*h*->*բերձ*, **dhel*->*դեղ*, **epi*>*եւ*, **er*->*երէ* (երէ), **erk*'*o*->*երգ*(-*ոյ*), **es*-*mi*>*եմ*, **g*'*ero*->*ծեր*, **ghel*->*գեղ*(-*աւն*), **g*'*her*-*mo*->*ջերմ*(*սեռ*. -*ոյ*), **k*'*er*->*սեր*-(եմ), **ued*->*զետ* *նն*):

3. Ի (*i*) են տվել. ա) **i*-ն (հմմտ. **dhi*-*n*-*g*'*h*->*դիզանեմ*, **gig*'->*կիծ* (կծանեմ), **li*-(*n*)-*k*'>*լիք*- (լքանեմ), **ni*-*zdo*->*նիստ*, *(*s*)*l**bh*-*ro*-?>*լիք*, **suid*-*ro*-*m*>*քիք* *նն*). բ) **e*-ն (հմմտ. **bhēr*->*բիր* (բրեմ, բրիչ), **dhēr*->*դիր*-*p*, **dhēs*-*es*>*դիք* «աստվածներ», **kērdi*->*սիրտ*, **mēd*-/(*med*-)>*միտք*, **stēno*->*սոնիք*, **uēikero*-[**uesperos*]>*զիշեր*, **uēro*->*զիր* *նն*). գ) **e*-ն (հմմտ. **bhendh*->*պինդ*, **eme*>*իմ*, **g*'*enos*->*ծին*(-իմ), **g*'*enā*>*կին*, **kēno*-*s*>*սին*(-*ոյ*), **seno*->*հին*). դ) **ei* (**i*)/*oi*-ն (հմմտ. **g*'*oig*'*ar*-*on*>*ծիծառն*, **g*'*hēio*->*ձի*(-*ոյ*), **keiker*->*սիսեռն*, **kneig*'*h*-/(**knig*'*h*-)>*նիգ*, *(*s*)*leig*'*h*->*լիգ*-եմ *նն*):

4. Ո (*o*) են տվել. ա) **o*-ն (հմմտ. **okto*>*ութ*, **orbho*->*որք*, **ozdos*>*ուստ*, *(*H*)*oxi*-*pā*>*հովի*, **bhos*'>*բոկ* «բոկիկ», **g*'*ou*->*կով*, **portijos* > *որդի*, **s*-*uop*-*no*-*s*>*քուն* (*սեռ*. *քնոյ*), **uorg*'*o*>*զործ* *նն*). բ) **ō*-ն (հմմտ. **g*'*ōu*-, **g*'*ūto*->*կոյ* (<*կու*) «թրիք», **phōku*-?>*փոքր*(-*ու*)). գ) երկրաբանի բաղադրիչ **o*-ն (հմմտ. **mou*-*no*->*մոյ* «բարեձևություն, վայելչություն», **pout*->*փոյթ* «շտապողականություն»):

5. Ը (*ə*) են տվել. ա) **a*-ն (հմմտ. **anti*>*ընդ* «միասին»). բ) **e*-ն (հմմտ. **enterā*>*ընդեր*-*p* «ներսում», **enghəti*->(ընձայ>)ընծայ, **sent*->*ընթ*-*ան*-*ամ* «վազում եմ, շտապում եմ, գնում եմ»). գ) **o*-ն (հմմտ. **posti*>*ըստ*):

Երկրորդաբար ը(*ə*)-ն առաջացել է նաև **e*>(i>) անցման արդյունքում՝ ռնգայինին նախորդող դիրքում (հմմտ. **dhē*-*ne*->(«դինեմ») դ(ը)նեմ «դնում եմ, տեղավորում եմ», **penk*'*e*>*հինգ*, որից՝ *h*(ը)նգետասան «տասնհինգ»):

6. Հայերենի *ու* (*ow*)-ի համար նշվում են հետևյալ նախաձևերը. ա) **u* (հմմտ. **ang*'*hu*>*անձուկ*, **dhuktēr* (<**dhugōter*->*դուստր*, **dhur*>*դուն*, **kūekurā*>*սկեսուր*, **mundyo*'>*մունջ*, **plē*-*nu*-*mi*>*լնում* «լցնել», **puro*>*հուր*, **skulu*>*ցուլ*, **snuso*->*նու* «հարսն», **tu*>*դու*, **usn*>*ուն*-*կն* «ականջ», **iug om*>*լուծ* *նն*). բ) **ū* (հմմտ. **mūs*>*մուկն*, **rū*>*ռոնալ* (<**ռոունալ*), **ūl*-*ուղի*, **ū*-*n*-⁵>*ունայն* «դատարկ» *նն*). գ) **ō* (հմմտ. **alōpekū*'>*աղուէս*,

⁴ Ըստ Գ. Ջահուկյանի՝ **muntjo*- (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Եր., 1987, էջ 139): Նրա կարծիքով **mundjo*-ն կտար **ūnū*' (նույն տեղում, էջ 182):

⁵ Հ. Աճառյանը «ուն-այն» բառի համար նշում է կարճ *u*-ով նախաձև՝ **un* (տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետև՝ ԼՔՀԼ), հ. 6, Եր., 1971, էջ 489), իսկ Գ. Ջահուկյանը՝ երկար (տե՛ս Джаякян Г. Б. Сравнительная грамматика армянского языка, Եր., 1982, էջ 34):

⁶ Նաև *(*ə*)*lōpeku*- (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 157):

*amōr>աւուր «օրվա», *dōm>տուն, *dō-ro->տուրք, *ghōukho-> գլուխ⁷, *g^uarōng^u>կոռնակ⁸, *k^uōn⁹>շուն, *nōmn>անուն, *ōmo>հում, *ōlen>ուլն «վիզ», *ōpne>ունիմ, *ōrēnāmi(?)> ուրանամ, *pōrtiō-¹⁰/¹¹*pōrdhiuio>ուրջու (?), *smōl>մուկ «ծուխ» են. η) *o` ոնգայինից առաջ (հմստ. *g'ōnu->ծուներ, *k^uon-to->սկունդ «շուն, շնիկ», *om(e)so-/*omsō->ուս,-ոյ, [*^uen-]¹²/ *^uon-> գուն): Երկրորդաբար ու (ow) են տվել նաև հ.-ե. *ou, *ōu և *eu երկբարբառները՝ ոյ (oy) > ու(ow) անցումով (հմստ. *g'heu-lo->ձող(>ձուլել), *l-eug' /loug' ->լոյծ (> լուծանել) *leuko->լոյս (>լուսաարել) են):

7. Հին հայերենի է (ē)-ն ունի երկբարբառային ծագում. սերում է հ.-ե. *ei, *oi նախաձևերից (հմստ. *dei->տէ-(ր), *dheig'ho-s>դէգ, *eik'yo-s>էշ, *k'ēro->սէր(-ոյ), *k^uoi-nā / [*k^uei-]>քէն, *meig'h->մէգ, միգեմ, *^ueis-kh-o->գէշ են): Ըստ ամենայնի, միակ բացառությունը *բրէտ* «իշամեղու, բորեղ, պիծակ» բառն է, որի համար Գ. Ջահուկյանն առաջարկել է *bho-?, այսինքն՝ երկար *ō-ով նախաձև¹³: *Բռռի* համար, որը *բրէտի* մի տարբերակն է (թերևս՝ ավելի հին ձևը), ինչպես Հ. Աճառյանը, այնպես էլ Գ. Ջահուկյանն ընդունում են *bhor- (*bhor-s-) նախաձևը¹⁴: Գ. Ջահուկյանի առաջարկը, այսպես կոչված, միջանկյալ լուծում է, որքանով որ հյ. է-ի և օ-ի համար հնարավոր չէ միևնույն *o նախաձևը վերականգնել: Մյուս կողմից, սակայն, չկա այլ օրինակ, որտեղ է-ն ունենա *ō նախաձևը: Կարծում ենք՝ ավելի հավանական է *բրէտի* համար *bhoir-(?) նախաձևի ընդունումը:

Ինչպես արդեն նշվեց, հայերենագիտության մեջ տարակարծություններ եղել են միայն է(ē), ու(ow), ը(ə) գրերով նշանակված հնչույթների հնչաբանական արժեքայնության հարցի շուրջ: Ըստ այդմ.

1. Է-ի առնչությամբ արտահայտվել է երեք մոտեցում. ա) է-ին հակադրվել է, ինչպես փակ ձայնավորը բացին, բ) եղել է երկբարբառա-

⁷ Հյ. «գլուխ» բառի այդ նախաձևը նշվում է ըստ Գ. Բ. Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 127 աշխատության: «Հայերեն ստուգաբանական բառարան»-ում Գ. Ջահուկյանը *խ*-ն առանձնացնում է արմատից՝ *ghōlū-kho- (տե՛ս Գևորգ Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՆԱԲ), Ե., 2010, էջ 163): Ըստ էության, նույնպիսի նախաձև առաջարկել էր նաև Հ. Պեղերսընը՝ *ghōlū- (տե՛ս Հովգեր Պեղերսըն, Հայերեն և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 79): Հ. Աճառյանը «գլուխ» բառը համարել է փոխառություն քրդերենի kəlx «գանկ» բառից (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՆԱԲ), հ. I, Ե., 1971, էջ 566):

⁸ Հ. Պեղերսընը առաջարկել է «*gēr... կամ *gōr...» նախաձևը՝ ըստ էության՝ *ունկը* անջատելով արմատից (տե՛ս Հովգեր Պեղերսըն, նշվ. աշխ., էջ 17):

⁹ Տե՛ս Հր. Աճառյան, ՆԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 534: Գ. Ջահուկյանի մոտ այս բառի հ.-ե. նախաձևը հանդիպում է ինչպես կարճ՝ *o (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 133-134), այնպես էլ երկար՝ *ō տարբերակով (տե՛ս Գևորգ Ջահուկյան, ՆԱԲ, էջ 593):

¹⁰ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 143:

¹¹ Տե՛ս ՆԱԲ, Ե., 2010, էջ 754: -է. *per-zE «ծնել» արմատից (տե՛ս նույն տեղը):

¹² Անկյունավոր փակագծերում նշված են Յ. Պոկոռնու «Նախնական ստուգաբանական բառարանում» տեղ գտած տարբերակները (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 109):

¹³ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 116:

¹⁴ Տե՛ս Հր. Աճառյան, ՆԱԲ, հ. I, էջ 472-473, Գ. Բ. Ջահուկյան ՀԼՊՆԺ, էջ 116, Գևորգ Ջահուկյան, ՆԱԲ, էջ 136:

կերպ, գ) *է*-ի և *ե*-ի տարբերությունը քանակական էր, հետևաբար նրանք հակադրվել են որպես միևնույն ձայնավորի երկար և կարճ տարբերակներ: Վերջին տեսակետը առաջադրել ենք մենք «Հին հայերենի *է* և հին սլավոներենի *ѣ* հնչույթների տարածամանակյա տիպաբանությունը» հոդվածում¹⁵: Մեր համոզմամբ, առնվազն մինչև 5-րդ դարի առաջին կեսը հին հայերենի *է*-ն եղել է երկար ձայնավոր: Ինչպես արդեն տեսանք, *է*-ն հին հայերենի միակ ձայնավորն էր, որը չուներ պարզ ձայնավորական ծագում¹⁶: Իսկ երկբարբառի պարզեցումը գոնե սկզբնական շրջանում տալիս էր երկար ձայնավոր, որն ավելի ուշ կարող էր վերածվել կամ չվերածվել համապատասխան կարճի:

է-ի որպես փակ ձայնավորի վարկածը գալիս է Ա. Մեյեից¹⁷, իսկ հիմնավորելու փորձ արել է Հ. Աճառյանը: Վերջինս հին հայերենի *է* և *ե* ձայնավորների տարբերությունը դիտարկել է ժամանակակից ֆրանսերենի երկու *e*-երի՝ *բաց*՝ *è* (հմմտ. *très* [tre] «շատ», *après* [apre] «հետո», *mère* [mɛ:r] «մայր», *père* [pɛ:r] «հայր»), և փակ՝ *é* (հմմտ. *année* [a'ne] «տարի», *thé* [te] «թեյ», *été* [e'te] «ամառ», *passé* [pa'se] «անցյալ»), ունեցած հնչարտաբերական և դիրքային տարբերությունների հետ զուգահեռի մեջ, համապատասխանաբար *ե*-ն համարելով *բաց*, իսկ *է*-ն՝ փակ ձայնավոր¹⁸: Հ. Հյուբշմանի կարծիքն այս առումով թեական է¹⁹:

է-ի երկբարբառային բնույթի կողմնակիցները այն համարժեք են համարում «ե+յ»-ի նրան վերագրելով [եյ] կամ [եի] հնչումը, միաժամանակ հին հայերենի *յ* և *ի* ձայնավորները համարելով լծորդ հնչյուններ, այսինքն՝ միևնույն հնչույթի դիրքային տարբերակներ²⁰: Շօգուտ այս վարկածի նշվում է, որ *ա* լծորդության բայերը սահմ. ներկ. եզ. թ. 3-

¹⁵ Տե՛ս **Петросян В.** Диахроническая типология фонем *է* в древнеармянском и *ѣ* в старославянском языках // Հայագիտության հարցեր, Եր., 2016, թիվ 1(7), էջ 128-141:

¹⁶ Բացառություն է *(ə)lōpeku-/alōpeku->*աղուէ* (սեռ. *աղուէտ*) բառը. պիտի ենթադրել, որ սեռականում պահպանվել է ավելի հին ձևը՝ *աղուէս*, իսկ *-է*-ով տարբերակը առաջացել է *-ուէ*- հաջորդականություն պարունակող բառերի համաբանությամբ (հմմտ. *նուէր*, *սյատուէր*) կամ էլ պարզապես գրչագրական զուգաձևություն է:

¹⁷ Տե՛ս **Meillet A.**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 44-45:

¹⁸ **Հրայրյա Աճառյան**, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 574-575: Նաև՝ **Ս. Աբեղյան**, Գրաբարի քերականություն, Յեր., 1936, էջ 9, **Գ. Ա. Ղափանցյան**, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Եր., 1961, էջ 241, **Ս. Ղ. Ղազարյան**, Հայոց գրական լեզվի պատմություն, Եր., 1961, էջ 171:

¹⁹ Հմմտ. «Հայերենի ձայնավորների հնչյունափոխության օրենքների ժամանակագրությունը» աշխատության մեջ նա հնարավոր է համարել, որ *է*-ն «5-րդ դարում կարճ, բաց «e» էր, ուրեմն այն միայն իր որակով (որպես բաց e) էր տարբերվում կարճ փակ «ե»-ից, բայց և չի բացառել, որ այդ ժամանակ էլ *է*-ն «երկար է եղել, ինչպես երբեմն նախկինում համենայն դեպս գոնե նախնադարյան ժամանակներում իր ստուգաբանության համաձայն (= հնդեվր. *ei* կամ *oi*) այն պետք է որ երկար եղած լինի» (**Հայերի ձայնավորներ**, նշվ. աշխ., էջ 395):

²⁰ Տե՛ս **Է. Բ. Աղայան**, Գրաբարի քերականություն, Եր., 1964, էջ 134-139, **Туманян Э. Г.** Древнеармянский язык. М., 1971, էջ 32, **Հ. Դ. Մուրադյան**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 142, **Джаукян Г. Б.**, նշվ. աշխ., էջ 27: Ըստ էության, *է*-ին երկբարբառային բնույթ է վերագրել նաև Ա. Աբրահամյանը (տե՛ս **Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձևաբանություն, Եր., 1976, էջ 4):

րդ դ. ունենում են *-aj* վերջը (աղայ «աղում է»), իսկ *է* լծորդության բայերը *-է* (երգէ «երգում է»), որից եզրակացություն է արվում, որ հին հայերենի *է-ն* համարժեք էր «ե+յ»-ի: Թերևս այդ վարկածի համար լրացուցիչ փաստարկ կարող էր լինել նաև այն հանգամանքը, որ 1) *h.-ե. *ei* և **oi* երկբարբառները հայերենում ունեցել են ինչպես *է* (հմմտ. **k'airo->ուէր*, **k^uoi-nā/[*k^uei-]>քէն*), այնպես էլ *ի* (հմմտ. **g'oiǵ'ar-on>ծիծառն*, **(s)leig'h->լիզ-եմ*) զարգացումը, 2) հին հայերենում ևս գործել է *է //ի* հերթագայությունը (հմմտ. *դէզ-դիզի*, *կէս-կիսոյ*, *շէն-շինական* ևն): Սակայն 1) ինչպես նկատել է նաև Շ. Աճառյանը, հունարեն-հայերեն տառադարձումներում հուն. *η (ē)*-ի դիմաց հայերենում հաճախ հանդիպում է *է* (հմմտ. *Κυριακή-կիրակէ*, *ύλη-հիլիէ*, *καθολική-կաթողիկէ* «ընդհանրական» ևն), իսկ *ε (e)*-ի դիմաց *է* (հմմտ. *άνγλος-անգլոս* «հրեշտակ», *επίσκοπος-էպիսկոպոս*, *θέμα-թեմ* ևն). չնայած որ այդ համապատասխանությունը բացարձակ չէ (հմմտ. *ήπιήν-էփենն* (թռչուն), *ήγεμόν-հեգեմոն* «կուսակալ» ևն), բայց և այնպես հայերենի այդ երկու հնչյւյթների տարբերության վկայություն է, իսկ տարբերությունն էլ, մեր կարծիքով, եղել է քանակական, 2) հին հայերենին խորթ չէր նաև *է //ե* հերթագայությունը (հմմտ. *աղուէս-աղուեսու*, *եղէզն-եղէզան*, *պատճէն-պատճենի*), 3) *h.-ե.* ցեղակիցների հետ տիպաբանական գուգահեռները ևս վկայում են *է-ի* որպես երկար ձայնավորի մասին. որպես կանոն, եթե ցեղակից լեզուն չի պահպանել նախալեզվի երկբարբառային ձևը, ապա վերածել է երկար ձայնավորի (հմմտ. **deik-* «ցույց տալ, ասել» հուն. *δείκνυμι*, լատ. *dēō*, գոթ. *ga-teizhan* «հայտարարել, հանրայնացնել», հ.վ.գրմ. *zīhan* «մեկին մի բան հաղորդել, մեկին մեղադրել», **k eigh-* «ցատկել, աշխույժ, առույգ» հյ. սէգ, սնսկ. *čǣghrá-* «աշխույժ, արագ», սնգսք. *hǣgian* «շտապել, յառաջանալ», **uēida / *uōida-* «գիտենալ» հյ. գէտ-, հուն. (f)οἶδα, սնսկ. *vēda* «գիտեմ», հն. սլավ. *вѣдѣ* «գիտեմ», **eī-ti* «նա գնում է» > հուն. *εἶσι* «գնում է», լիտ. *eit(i)*, սնսկ. *ѣти-*, **sneig^h-* «ձյուն է գալիս» > հուն. *νεῖφет*, հն. լատ. *nīvit*, հ.վ.գրմ. *snīwan* և այլն): Իհարկե, երբեմն սպասելի երկբարբառի կամ երկար ձայնավորի փոխարեն առկա է կարճ ձայնավոր (հմմտ. **eī-ti* > լատ. *it*), սակայն դրանից օրինաչափությունը չի խախտվում: Այն, որ հին հայերենի երկբարբառային ծագում ունեցող *է-ն* եղել է երկար ձայնավոր և ոչ թե երկբարբառակերպ, անուղղակիորեն կարող են վկայել նաև հետևյալ տիպաբանական տվյալները. ա) *h.-ե. *ei* երկբարբառն ընդհանուր կելտերենում տվել է *ē*. «լատիներենից փոխառված բառերում ևս *ē* է զարգացել նաև նոր կելտերենում»²¹, բ) գերմանական լեզուներում *ē* է տվել *h.-ե.* երկար **ē+*i* երկբարբառային կապակցությունը²²: Իսկ որ հին հայերենի *է-ն* ե-

²¹ Льюис Г. и Педерсен Х. Краткая сравнительная грамматика кельтских языков. М., 1954, էջ 35;

²² St u «Сравнительная грамматика германских языков». Т. II. М., 1962, էջ 80: Իսկ երկար *i-ն* համարվում է *h.-ե. *ei* երկբարբառի հետագա հնչյւյթափոխությունը գերմանական լեզուներում (տե՛ս նույն տեղը, էջ 74):

ղել է երկար ē-ի, այլ ոչ թե երկար ī-ի գրային նշանը (նկատի ունենալով, որ հ.-ե. *ei-ն հայերենում սովել է նաև /j), երևում է նրանից, որ հետագայում է-ն համընկել է Է-ի հետ, այլ ոչ թե /h-ի (հմմտ. գէս>գես, կէս>կես, ծէս>ծես, հանդէս>հանդես, շէն>շեն նն):

Հին հայերենի Է-ի հնչաբանական արժեքը որոշելու առումով կարևոր նշանակություն ունեն նաև իրանական փոխառությունները: Որպես կանոն՝ իրանական երկար ē-ի դիմաց հայերենը ունի Է. միայն ավեստայի ձևերում առկա է aē երկբարբառը (հմմտ. գէս «մազ» <պհլ. *gēs, ավեստ. gaēsa, գումէշ<gōmēš, դէմ<dēm, զէն(-ք)<zēn, հանդէս<handēs, հէն «ավազակ» <hēn, հրավէր<hravēd, յաւէթ (յաւէրթ)<yāvēž, յավէտ<yāvēt, նկարէն<nikārēn, նուէր<nivēr, պարտէզ<*pardēz, վէզ «վեճ, կռիվ»<պհլ. *vēg, ավեստ. vaēya «հարված», վէժ<vēž, վեմ<vēm, տէզ «նիզակի ծայրի սուր երկայթ» <պհլ. *tēy, ավեստա taēya «սուր ծայր» և այլն): Հայերենի Է-ի դիմաց իրանական ձևերը չունեն ոչ երկար ē, ոչ էլ aē երկբարբառը: Հայ-իրանական հնչույթային առնչությունները ևս վկայում են, որ հայերենի Է-ն եղել է երկար ձայնավոր:

Է-ի և Է-ի քանակական տարբերությունը, ըստ ամենայնի, վերացել է 5-րդ դարի վերջերին կամ 6-ի սկզբներին: Տարբերության չեզոքացման նախադրյալ կարող էր լինել այն, որ հին հայերենը դեռևս վաղ նախագրային փուլում վերացրել էր հնդեվրոպական ձայնավորների քանակական տարբերությունը, ուստի Է-ի և Է-ի քանակական հակադրությունը, լինելով ոչ համակարգային իրողություն, չէր կարող երկար պահպանվել:

2. Հին հայերենի ու-ի հնչաբանական արժեքի որոշման հարցում հայերենագիտության մեջ ուղենշային է եղել Հ. Հյուբշմանի տեսակետը, ըստ որի՝ ու-ն պարզ ձայնավոր էր, իսկ գրության երկգիր ձևը հունարենի օս-ի ընդօրինակում է, որքանով առհասարակ Մաշտոցը հետևել է հունարենի այբուբենի սկզբունքին²³: Այս տեսակետը ոչ միայն ընդունվել է հայերենագիտության մեջ, այլև եղել են հավելյալ փաստարկներով հիմնավորելու փորձեր²⁴: Այդ փորձերն արվել են առավելապես համաժամանակյա հայեցակերպում, որովհետև խնդիր է դրվել որոշելու ու-ի հնչաբանական արժեքը գրաբարյան փուլում, այլ ոչ թե՛ հին հայերենում առհասարակ: Բայց նույնիսկ գրաբարյան փուլի համար այդ փաստարկները, ուշադրության արժանի լինելով հանդերձ, միանշանակ չեն: Մեր կարծիքով, հիմնահարցի լուծման առումով ոչ պակաս կարևոր է հաշվի առնել նաև տարածամանակյա հնչույթաբանության տվյալները: Հետևաբար հատուկ կարևորություն է ստանում ու-ի ծագումնաբանական նախաձևերի քննության հարցը: Վերը արդեն տեսանք, որ, ըստ համեմատաբանական տվյալների, հայերենի ու-ն ունեցել է հ.-ե. *u (*dhuktēr (<*dhugōter-)>դուստր), *ū (*mūs>մուկն), *o (*g'ōnu->ծունր), *ō (*dō-ro->տուրք) հնչույթային նախաձևերը, երկրորդաբար

²³ Տե՛ս Հայնրիխ Հյուբշման, նշվ. աշխ., էջ 70:

²⁴ Տե՛ս Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 92-95: Հ. Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 29-30:

առաջացել է հ.-ե. *ou, *ōu և *eu երկբարբառներից: Սակավաթիվ բառերում *ni*-ն առաջացել է հ.-ե. *op հաջորդականությունից (հմմտ. *(ə)lōpeku->աղուէս, *sūopnos>քուն, *opi>ու, *ōp-n->ունիմ, *opto>ուր): Տիպաբանական զուգահեռներից երևում է, որ միայն պարզ ձայնավորական նախաձևերի հետ կապը ևս չի բացառում երկբարբառային զարգացման հնարավորությունը (հմմտ. *yerdho- «բառ»- գոթ. *waurd*, *dh̥yer-/*dhur- «դուռ, դարպաս»> հյ. դուռն, գոթ. *daur*, *do- «տալ»> լիտվ. *dúoti* «տալ», *tēk-ro- >թիւր (թէւր)?), սակայն մտածելու տեղիք է տալիս հատկապես հ.-ե. *op հաջորդականության՝ *ni*-ի վերածվելու հանգամանքը: Մեր կարծիքով՝ *op>ու անցումը վկայում է, որ արդեն նախագրային հայերենում *ni*-ն եղել է երկբարբառից հաջորդականություն, հետևաբար վերոհիշյալ բառերում առկա է *p>լ հերթագայություն, այլ ոչ թե՛ *op>ու անցում: Հօգուտ այս տեսակետի են վկայում նաև *epi > եւ, *skhi-p->շիւ, *tap-ni->թան, *tap->թաւ-(ալեմ), *sip-to->հիւթ(-ոյ), *septm> էւթն (էաւթն), ինչպես նաև *u_{per}->(ի) Վեր, *u_{pero}->Վեր(-ոյ), *g^horēbhno->կորիւն?, *obhel->աւել(-եմ/-ում), *pā-tro->հաւր-ան համապատասխանությունները: Հետևաբար, հիմք ընդունելով միայն *u/*ū/*o/*ō>հյ. *ni(ow)* անցումները և ասել, որ հին հայերենի *ni*-ն եղել է պարզ հնչույթ, կարծում ենք՝ ճիշտ չէ, որովհետև այդ դեպքում մենք ոչ միայն շրջանցում ենք *p>լ անցումը (*op>ու), այլև անտեսում ենք *ou/*ōu/*eu (>ոյ(oy))>*ni(ow)* երկբարբային անցումները (հմմտ. *g^hheu-lo->ձուլ (>ձուլել), *leug^h-/loug^h->լոյծ (>լուծանել) *leuko->լոյս (>լուսաւորել) ևն):

Ինչպես է-ի դեպքում, *ni*-ի պարագայում ևս հունարեն-հայերեն տառադարձումները միանշանակ չեն. հմմտ. **ou-ni** (*akolóuthos*-ակողուիթ (բյուզ. տիտղոս), *kourlús*- գուռայ «սափրիչ», *kourēbes*- կուրէտ («քուրմ»), *marouilion*-մարուլ (բույս), *iouli's*- յուլիդա (ձուկ), *oudéteron*-ուդէտերոն «չեզոք», *ouranistkos*- ուրանիսկոս «քիմք», *phōsourá* փոսուռայ «լուսատոնիկ», **ou-n** (հմմտ. *boúbalon*- բոբողոն «գումեշ»), **ou-nou** (*ailouros*- եղուռոս «կատու»), **ou-h** (*lingóurion*- լինգիւրոն «քար»), **y-ni** (հմմտ. *smyrna*, *smyrra*- գմուռոս), **ou-hi** (հմմտ. *mousion*- միւսիոն «մոզայիկա»), **eu-ni** (*periudeutés*- պերէտուտ «հոգևոր տեսուչ»)²⁵: Միակ բանը, որ կարելի է ասել ըստ վերոհիշյալ օրինակների, այն է, որ *hունարեն* *ou-hայերեն* *ni* համապատասխանությունը բացարձակ չէ: Դեռ հարց է արոյոք ք 5-րդ դարում հունարենի երկբարբառային *ou*-ն վերածվել էր պարզ [u] ձայնավորի, թե՛ նրան այդպիսի արժեք է վերագրվել ըստ ավանդական արտասանության, ինչպես որ, օր., գրաբարյան *au*-ը մենք կարդում ենք [o]:

Կարծում ենք՝ հարցի լուծման առումով ավելի մեծ նշանակություն կարող են ունենալ ձևաբանական իրողությունները: Բառավերջի դիրքում *ni*-ն, զուտ հնչույթային գործառույթից բացի (հմմտ. *լեզու*, *ուրու*,

²⁵ Տե՛ս Չ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951, էջ 10-34: Պահպանում ենք գրքի լատինատառ տառադարձումը:

արու, կծու են), իրականացնում է նաև ձևաբանական գործառույթ. այն ու արտաքին հոլովման ենթարկվող բառերի եզ. սեռ.-տր. և գործ. հոլովների ցուցիչն է (հմմտ. առաւաւտ-ու / (առաւօտ-ու), «առավոտի / առավոտով», գանձ-ու «գանձի/գանձով», զարդ-ու «զարդի/զարդով», ծով-ու «ծովի/ծովով», հաւ-ու «թռչունի/թռչունով», վրիժ-ու (<վրէժ) «վրէժի/վրէժով», փոք-ու «փոքրի/փոքրով» են): Որպէս եզ. գործ. ցուցիչ ու-ն համարժեք է ա պարզ և ի-ա, ո-ա խառն հոլովումների -աւ (տիտանաւ «տիտանով», Արշակաւ, Հայկաւ, գուսանաւ, մեծաւ, աղանէաւ, բարեաւ, թշնամեաւ, կենդանեաւ են), ի պարզ հոլովման իւ (ամբողջիւ, այծիւ, դարիւ («բարձր տեղ» նշանակությամբ), ձայնիւ, երեւութիւ (<երեւոյթ), բոպէիւ) վերջավորություններին, որը նշանակում է, որ այդ դիրքում ու-ն պարզ հնչյութի ցուցիչ չէ, այլ երկբաղադրիչ միավորի, մեր կարծիքով՝ երկբարբառակերպի: Եզ. գործ.-ում երկբաղադրիչ վերջավորություն ունեն նաև ո պարզ հոլովման (արտաքին թեքման) ենթարկվող բառերը՝ -ով (հմմտ. գործով, աթոռով, աղիւսով, գինով, գրով (<գիր), թուով (<թիւ) են: Ըստ Հ. Հյուբշմանի՝ ա) բաց վանկում, այդ թվում՝ բառավերջի դիրքում լ-ը հնչել է ինչպէս բաղաձայն (շրթնատամնային) վ, ք) և որովհետև ո-ից հետո լ գրելու դեպքում ու վ հնչունակապակցությունը կնույնանար ու-ի հետ, Մաշտոցն այդ դիրքում գործածել է վ գիրը, որպէսզի, օրինակ, կով, ծով, գինով, թուով բառաձևերի վերջնահունչ -ով-ը չշփոթվեր ու-ի հետ²⁶, այսինքն՝ այդ բառաձևերը չունենային *կոու, *ծոու, *գինոու, *թուոու գրային տեսքը: Ըստ ամենայնի՝ այսպիսի բացատրությունը որոշ չափով ուղղորդված է բառավերջի դիրքում լ-ի ավանդական արտասանությամբ, այն է՝ [v]: Այս հարցում, կարծում ենք, իրականությանը ավելի մոտ են Ա. Մեյեն և Հ. Աճառյանը, ովքեր բոլոր դիրքերում լ-ին վերագրում են կիսաձայնային (ըստ Աճառյանի՝ հունարենի ս-ին մոտ) հնչում և ոչ երբեք՝ բաղաձայնական: Այլապէս, ճիշտ է նկատում Հ. Աճառյանը՝ ասելով, որ Մաշտոցին ոչինչ չէր խանգարում բաց վանկում, այդ թվում՝ բառավերջի դիրքում գրելու վ (այսինքն՝ *ավագ, *ավագ, *նավ, *թիվ, *տիտանավ, *ամբողջիվ, *ձայնիվ) և ոչ թե՛ լ²⁷:

Այսպիսով, չնայած ոչ լիարժեք պարզությանը, ավելի հավանական է, որ հին հայերենի ու-ն ունեցել է երկբարբառային հնչում [ow]: Ավելի պարզ՝ եղել է երկբարբառակերպ, ինչպէս աւ (մաւտ), եւ (բեւր), իւ (սիւն), ոյ (լոյս), այ (հայր)-ը:

3. Ն. Մառը ը-ն համարել է կիսաձայն հնչյուն, ինչպէս որ յ-ն և լ-ը (հմմտ. «... ը հնչյունը, որը ցանկացած ձայնավորի օրինական կիսաձայն է, ձայնավորի հետ զուգադիպելիս փոխարինվում է մյուս երկու կիսաձայններից մեկով (յ, լ), որոնք նմանություն չունեն այդ ձայնավորի

²⁶ Տե՛ս Հայերի Հյուբշման, նշվ. աշխ., էջ 70-71:

²⁷ Տե՛ս Հրայր Աճառյան, Հայոց գրերը, էջ 588:

հետ...»²⁸): Այլ կերպ՝ Ն. Մառը հին հայերենի *ը*-ին վերագրում է ձայնորդական արժեք: Հ.-ե. համեմատական լեզվաբանության մեջ **ə*-ն (հ.-ե. առաջին շվա/shva indoeuropeicum primum) համարվել է ինչպես ձայնորդ²⁹, այնպես էլ կոկորդային (ларингалный) հնչյունի ձայնավորական պատկերացումը³⁰ կամ «կոկորդայինի» վանկարար տարբերակը³¹, սակայն չկան օրինակներ, որոնք կվկայեն, որ հայերենի *ը*-ն առաջացել է հ.-ե. **ə*-ից: Իհարկե, Ն. Մառը այդպիսի հարցադրում չի էլ անում, այլ *ը*-ի ձայնորդական (իր տերմինով «կիսաձայն») բնույթը բացատրում է ստորին աստիճանում³² ձայնավորների թույլ հնչարտաբերությամբ (հմմտ. «Այդ աստիճանում բոլոր հնչյունները համընկնում են ոչ միայն քանակապես, այլև որակապես, միատեսակորեն հնչում են *ը*, եթե չի նախորդում ուրիշ ձայնավոր»³³): Ի տարբերություն հ.-ե. մյուս ձայնավորների, որոնք ունեցել են ինչպես կարճ, այնպես էլ երկար տարբերակներ, **ə*-ն եղել է «գերկարճ ձայնավոր» և հնչույթաբանական գործառույթ չի իրականացրել³⁴:

Թեպետ հին հայերենի *ը*-ն հ.-ե. շվայից (ոչ առաջին, ոչ էլ երկրորդ) չի սերվել, բայց և այնպես այն ևս եղել է թույլ ձայնավոր և ըստ ամենայնի՝ այդ պատճառով վաղ շրջանի գրություններում չի արտացոլվել³⁵: Ը-ն ունեցել է դիրքային կիրառության սահմանափակումներ. բառը չէր կարող ավարտվել *ը*-ով (հին հայերենը *ը* հոդ չուներ), ինչպես նաև չէր կարող լինել շեշտված վանկում, որովհետև շեշտ չէր ընդունում: Եթե բառի վերջին վանկի ձայնավորը *ը*-ն էր, ապա բառային շեշտն անցնում էր նախորդ վանկին (հմմտ. *ա՛ զ-դ(ը)ր*, *ա՛ ն-գ(ը)դ*, *դո՛ւս-տ(ը)ր*, *ե՛ -գ(ը)ր*, *ե՛ -գ(ը)ն* «եզ», *ե՛ -դ(ը)ն* «եղնիկ», *ե՛ -տ(ը)ր* «տեղ», *ե՛ -տ(ը)ր*³⁶ «աղիճ, բոզ», *վա՛* -

²⁸ Март Н., նշվ. աշխ., էջ 25-26:

²⁹ Հմմտ. «Հերթագայությունների տեսությունից հետևում է..., որ **ə*-ն *ā*-ին կամ *ē*-ին հարաբերվում է այնպես, ինչպես ձայնավոր ձայնորդը երկբարբառին. իրականում էլ, հնդեվրոպերենի տեսանկյունից, **ə*-ն ձայնավոր չէ բուն իմաստով, այլ ձայնորդ» (Мейе А. Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, с. 126): Կամ՝ «... հնդեվրոպական նախալեզվի *ə* ձայնորդ էր» (Հ. Աճառյան, ԼՔՀԼ, հ. 6, էջ 477):

³⁰ Տե՛ս Օдри Ж. Индоевропейский язык // «Новое в зарубежной лингвистике», вып. XXI. М., 1988, էջ 35:

³¹ Տե՛ս Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс. Индоевропейский язык и индоевропейцы. Т. I. Тбилиси, 1984, էջ 166:

³² Ն. Մառը հին հայերենում տարբերակել է միևնույն ձայնավորի երեք տարբեր ներկայացուցիչներ՝ որպես նրա քանակական երեք աստիճանները: Ստորին աստիճանում, որին պայմանականորեն վերագրվում է մեկ մորա, հնչյունը կիսաձայն է: Միջինում պարզ ձայնավորներն են *ա*, *ե*, *ի*, *ո*, *ու*, որոնք հավասար են երկու մորայի: Բարձր աստիճանում «այդ նույն պարզ ձայնավորներն են *յ* կամ *լ* կիսաձայներից մեկի հետ. *ալ/աւ*, *ել* (=է)/*ել*, *իւ/իլ* (>ի) (*ի*), *ոյ/ուլ* (ժողովրդ. ու), **ոյ* (>ու)/* ու (*>ու*), այն է՝ երկբարբառները (ըստ իս երկբարբառակերպերը), որոնք, Ն. Մառի դիտարկմամբ, առաջացել են նախագրային հայերենի երկար ձայնավորներից (տե՛ս Март Н., նշվ. աշխ., էջ 24-26):

³³ Март Н., նշվ. աշխ., էջ 24-25:

³⁴ Տե՛ս Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 161:

³⁵ Տե՛ս Հրաչյա Աճառյան, նշվ. աշխ., էջ 605-606:

³⁶ Այս բառը Հ. Աճառյանը վկայակոչում է ըստ Երեմիայի բառարանի՝ «աղջիկ կամ բոզ» (տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 33): Ըստ Գ. Ջահուկյանի՝ հուն. *φίλον*. է (*εταίρα*). «աղիճ կամ բոզ» իմաստով, որն ունեցել է բրբռ. կիրառություն (տե՛ս Գևորգ

դ(ը)ր «կարճ սուր», տա՛յ-գ(ը)ր, յոր-դու-մ(ը)ն, յու-զո՛ւ-մ(ը)ն նն): Ի տարբերություն *ս, է, է, ի, ո* ձայնավորների, որոնք կարող էին լինել բառի միակ վանկարար հնչյունը (հմմտ. *հարճ* (սեռ. -*ի*), *զես* (սեռ. -*ոյ*), *ծէս* (սեռ. *ծիսի*), *կիզ* «երած՝ խորոված բան»³⁷, *հոդ* (սեռ. -*ոյ*) նն), *ը*-ն չէր կարող լինել այդպիսին. այն կարող էր լինել վանկարար հնչյուն, ինչպես վերոհիշյալ բառերի վերջին վանկերում, բայց չէր կարող լինել բառի միակ ձայնավորը: Այսինքն՝ կարող էր լինել *տեղ*, բայց չէր կարող լինել, օր., *տըղ՝ որպես բառ, կարող էր լինել *եսոյ*, բայց չէր կարող լինել *տըր: Եթե, օր., *եսոյ* բառի *է*- սկզբնահնչյունը արմատի մաս չլիներ³⁸, ապա այն կավելանար իբրև նախահավելված, այնպես, ինչպես *ա*-ն է ավելացել, օր., նույն շարքի *ա-ստղ* բառին (հմմտ. *stēr «աստղ»> սնսկ. և գեղ. star-, լատ. stella, բայց հուն. ἄ-στῆρ, ἄ-στρον), ինչպես նաև հայերենի բազմաթիվ այլ բառերի (*ա-ռեւծ*, *ա-րեզ/ա-րեւ* նն) սկզբից, որոնց հ. -ե. ցեղակիցները, բացառությամբ հունարենի, չունեն այդ նախահավելվածը (հմմտ. *reug- «մոնչել»>լատ. rūgio «առյուծի մոնչալը», բայց հուն. ἔ-ρεύγομαι «առյուծի մոնչալը», *reu-, *rey- «արեւ, արեզ» սնսկ. ravi- և այլն):

Թեև հին հայերենի (և առհասարակ հայերենի) բառակազմության մեջ, ի տարբերություն հ. -ե. այլ լեզուների, *ը*-ի դերը մեծ է, բայց և այնպես նրա յուրահատուկ բնույթը կարող է և որոշ հարցեր առաջացնել, մասնավորապես՝ *ը*-ն եղել է ինքնուրույն հնչույթ, թե՛ մեկ այլ հնչույթի ենթահնչույթ կամ դիրքային տարբերակ: Հիմնվելով գործառական հնչույթաբանության տարբերակիչ հատկանիշների և հակադրության մեթոդի վրա՝ այս հարցի պատասխանը համոզիչ կերպով տվել է Է. Ադայանը իր «Գրաբարի քերականություն» գրքում, այն է՝ *հին հայերենի ը-ն եղել է ինքնուրույն հնչույթ, որովհետև իրականացրել է իմաստատարբերակիչ հակադրություններ*³⁹ (հմմտ. ըստ-ստտ-ոստ, ըմպեմ-

Ջահուկյան, ՀՄԲ, էջ 219), իսկ «Առձեռն բառարան...»-ը տալիս է «գէշ աղջիկ, բոզ» իմաստը (տե՛ս «Առձեռն բառարան՝ հայկազնեան լեզուի» (այսուհետև ԱԲՀԼ), Ակթիլիաս, 1988, էջ 18): Ըստ ամենայնի՝ ՀՄԲ-ում «աղջիկը» վրիպակ է, որովհետև այդ բառը չի կարող դրվել «բոզի» կողքին որպես հնարավոր զուգահեռ:

³⁷ ԱԲՀԼ, էջ 438:

³⁸ Ինչպես Հ. Պեղերսընը, այնպես էլ Հ. Աճառյանը *եսոյ*-ի նախաձև են համարել հ. -ե. *sed- «նիստ» արմատը: Մակայն, ի տարբերություն Պեղերսընի, Աճառյանը *եսոյ*-ը բխեցնում է ոչ թե անմիջապես *sed- -ից, այլ -lo- ածանցումով *sedlo- «նստել» ձևից: Ընդ որում *եսոյ* (սեռ. *եսեդ*) և *տեղ* (սեռ. *տեդի*) ձևերից հնագույն է համարվում *եսոյ*-ը (տե՛ս **Հայերի շուրջման**, Հայերենի քերականություն, Եր., 2003, էջ 497, **Հովգեր Պեղերսըն**, նշվ. աշխ., էջ 67, **Հր. Աճառյան**, ՀՄԲ, հ. IV, Եր., 1979, էջ 392-394): Օ. Մեմերենյին հ. -ե. լեզուններում նշում է *sed-to- «նստել» ածանցավոր հիմքից կազմություններ (տե՛ս **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 118), սակայն հայերենի *դ*-ն չէր կարող հ. -ե. *-t- ից զարգանալ: Ըստ Հ. Պեղերսընի՝ *եսոյ*-ի «ո պայահովապես ածանցական տարր մըն է» (**Հովգեր Պեղերսըն**, նշվ. աշխ.): Հետևաբար բուն արմատն է *ես*:- Հավանական պիտի համարել *եսոյ*-ի անմիջական ծագումը *sedlo- նախաձևից: Ըստ այդմ՝ *եսոյ*-ի մեջ պահպանվել է հ. -ե. նախաձևի *l-ն՝ *l>ղ անցումով, իսկ o-ն եղել է բնի ձայնավոր, որն ընկել է: Հայերենում հ. -ե. *-lo- ածանցի մասին տե՛ս նաև **Meiße A.**, Введение ... , էջ 290:

Մյուս կողմից (իսկ դա այստեղ ավելի կարևոր է), *sed- և *sedlo- նախաձևերից երևում է, որ *e-ն արմատի բաղադրիչ է, այլ ոչ թե նախահավելված (աուզմենտ):

³⁹ Տե՛ս **Է. Բ. Ադայան**, նշվ. աշխ., էջ 83-87:

ամպեմ, ընկար «դու ընկար»-նկար (սեռ. -*ու*) «պատկեր» (ը//*թ*), ակ(ը)ն «աչք»-ական «փոս», վարս «մագ-վար(ը)ս՝ վարք գոյ. հգն. հյց.):

Մյուս ձայնավորների հնչույթային արժեքայնության հարցը տարակուսներ չի հարուցել: Որ հին հայերենի *ա* (*a*), *ո* (*o*), *ե* (*e*), *է* (*ē*), *ի* (*i*) ձայնավորները և *ու* (*ow*) երկբարբառակերպը եղել են ինքնուրույն հնչույթներ (այլ հարց է՝ մենաբարբառ *ո*, *թե*՝ երկբարբառ), երևում է նվազագույն զույգերի հետևյալ հակադրություններից. տաղ-տեղ, քան-քուն, սան-սին, գետ-գէտ(>գիտ-), խաթ «ծովեզերեայ արտուտ»⁴⁰-խէթ «խղճմտանք»⁴¹-խիթ «ծակոց, սուր ցավ»⁴², գեր-գիր, աստ(ը)դ-աստեղ (սեռ.-տր. հլ., եգ. թ.), իմ-ամ «տարի», կիր-կար «ծուռ, կեռ», դիտեր-դատեր, արի-արու, հին-հէն «ելուզակ», ունչ «բեղեր, ընչացք»-ինչ, ունչ-դունչ (*թ/դ*), հուն-հին, մուրճ-մորճ «ծառի դալար ճյուղ», նու «հարս»-նա (անձն. դեր., եգ. թ., 3-րդ դ.) և այլն: Թեպետև *ու*-ի հետ հակադրությունը ոչ թե պարզ ձայնավորների հակադրություն է, այլ ձայնավորի և երկբարբառակերպի, բայց և այնպես հնչույթային հակադրություն է, որովհետև երկբարբառակերպը (նաև երկբարբառը, եռաբարբառը և եռաբարբառակերպը) ևս հնչույթաբանական մեկ միավոր է, կարող է ինչպես հերթագայվել պարզ ձայնավորի հետ (հմմտ. մատեն-մատենի, ատեն-ատենադպիր, գիւղ(<գէւղ)-գէղջ նն), այնպես էլ նրա հետ նվազագույն հակադրություն կազմել (հմմտ. բեր-բեր, հիւղ-հող, հիւր-հեր «վարս», կոր-կար, մոր «մուրալը»-մեր («ես» անձն. դեր. հգն. սեռ.), մաւտ (>մօտ)-մէտ «միտված, հակված» և այլն):

Զգալի դժվարություն է ներկայացնում, սակայն, այն հարցի պատասխանը, թե ինչպես է հ.-ե. նախալեզվի մի քանի հնչույթ նախագրային հայերենում տվել միևնույն հնչույթը (հմմտ. հ.-ե. **a*/ **a*/**o*/ **ə*/ **ɛ*> հյ. *ա* (*a*) կամ՝ հ.-ե. **u*/ **ū*/ **ō*/ **o*>*ու* (*ow*) նն), և այդ առումով տիպաբանական ինչ զուգահեռներ կան հ.-ե. մյուս լեզուների հետ:

Հ.-ե. ցեղակիցներից հնչյունական զուգաբանություններով հայերենին ամենից մոտ է հին հունարենը⁴³: Հին հունարենում ևս կարճ *α*(*a*)-ն կարող էր ստացվել հ.-ե.՝ 1) կարճ **a*-ից (**agros* «արտ, դաշտ»>հուն. *ἀγρός*, **dakru* «արցունք»> հուն. *δάκρυ*), 2) երկար **ā*-ից (**mātēr* «մայր»> հուն. *μάτηρ*, **bhrātēr* «եղբայր»> հուն. *φράτηρ* «կրոնական եղբայրության անդամ» նն), 3) **ə*-ից (**ṛətēr*>*πατήρ*): Երկրորդ և երրորդ տեղերում են փոյուգերենը և թրակերենը⁴⁴: Ըստ Գ. Ջահուկյանի կատարած զուգաբանական

⁴⁰ ԱԲՀԼ, էջ 383:

⁴¹ Նույն տեղում, էջ 377, Ռ. Ս. Ղազարեան, Գրաբարի բառարան, հ. Ա, Եր., 2000, էջ 567:

⁴² ԱԲՀԼ, էջ 378, Ռ. Ս. Ղազարեան, նշվ. աշխ., էջ 568:

⁴³ Տե՛ս *Джаукян Г. Б.*, նշվ. աշխ., էջ 204:

⁴⁴ Տե՛ս *Джаукян Г. Б.*, նշվ. աշխ., էջ 204: Բուլղարացի հնդեվրոպարան Վ. Գեորգիևը, բալկանյան լեզուները խմբավորելով ըստ «մերձավոր ցեղակցական լեզվական ընդհանրության», հայերենը և փոյուգերենը դասում է մեկ խմբի մեջ «փոյուգա-հայկական» (տե՛ս *Георгиев В. И.* Исследования по сравнительно-историческому языкознанию. М., 1958, էջ 143):

քննության, օր.՝ *ə>a անցումը բնորոշ է հ.-ե. լեզուների մեծ մասին (թոխարական, իտալական, սլավոնական, բալթյան, փոյուգիական, թրակյան, ալբանական, իլլիրական, վենետական, կելտական, գերմանական), իսկ հունարենում ունի մասնակի դրսևորում⁴⁵: Հ.-ե. երկրորդ շվա՝ *ɛ>a անցում առկա է հնդկական, իրանական, թոխարական, վենետական, իտալյան, մասամբ՝ հունական ճյուղի լեզուներում⁴⁶: Հնչյունաբանական գուգաբանություններով սանսկրիտը հայերենի հետ ամենից քիչ ընդհանրություններ ունեցող լեզուների թվում է⁴⁷: Այդ իրողությունը վերաբերում է ինչպես երկու լեզուների հնչույթային համակարգերին առհասարակ, այնպես էլ ձայնավորական համակարգերին՝ մասնավորապես: Վերջին իրողության հիմնական պատճառը, թերևս, այն է, որ հ.-ե. *e/ē, *o/ō, *a/ā ձայնավորները հնդիրանական ճյուղի լեզուներում, այդ թվում՝ սանսկրիտում, համընկել են a/ā-ի մեջ՝ կարճերը՝ կարճի, երկարները՝ երկարի, իսկ սանսկրիտի երկար ē և ō ձայնավորներն ունեն երկբարբառային ծագում (հմմտ. *dāiḡer «տայգր»>սնսկ. dēvar-, *deīḡos «աստված»>սնսկ. dēvas, *leuk- «լուսավորել»>սնսկ. rōčati նն): Միայն այդ հանգամանքն էլ բավական է, որպեսզի սանսկրիտի հետ տիպաբանական գուգահեռը նպատակահարմար չդիտվի:

Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից ավելի կարևոր է այն, որ ցեղակից լեզուներում a են տվել, օր., հ.-ե. *ə-ն կամ *o-ն (հմմտ. *do- (<*doh-)>տալ. «տալիս եմ», հին սլավ. дѣти «տալ»), քան այն, որ նույն լեզուներում a է տվել հ.-ե. *a-ն: Եվ որ նման օրինակները բացառություններ չեն ո՛չ միևնույն լեզվում (օր.՝ հայերենում) քանակական դրսևորումների առումով, ո՛չ էլ ցեղակից լեզուներում դրանց առկայության առումով: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ ինչպես օրինաչափական, ասենք՝ *o>o կամ *e>e, այնպես էլ «ոչ օրինաչափական», օր.՝ *o>a կամ *ə>a (հմմտ. (*pətér> հուն. πατήρ, լատ. pater, գոթ. fadar, հյ. հայր) հնչույթային անցումների համար եղել են ընդհանուր բնույթի պատճառներ:

Նախապատմական հայերենի հնչույթափոխությունները, ըստ Ա. Մեյեի, հ.-ե. «բարձրության շարժական շեշտի»⁴⁸՝ հայերենում բառի վերջընթեր վանկի վրա կայունանալու հետևանք են, որն էլ վերջնավանկի թուլանալու և հ.-ե. ցեղակիցների համեմատությամբ մեկ վանկով կրճատվելու պատճառ է դարձել (հմմտ. սնսկ. páñ-ca, հուն. πέν-τε, հյ. հինգ): Այդպիսի ազդեցություն է ունեցել նաև բառափոխական և բառակազմական գործընթացների ժամանակ շեշտի տեղաշարժը դեպի

⁴⁵ Sté u Джаукян Г. Б., նշվ. աշխ., էջ 202:

⁴⁶ Sté u նույն տեղը:

⁴⁷ Sté u նույն տեղը:

⁴⁸ Meillet A., նշվ. աշխ., էջ 58:

վերջնավանկ (հմմտ. անձո՛ւկ-անձ-կո՛յ, մարմի՛ն-մար(օ)մ-նո՛յ, սի՛րտ-ս(ը)ր-տի՛, պատի՛ չ-պատ-ռո՛ւյ)⁴⁹:

Ըստ Հ. Պեդերսընի, սակայն, նախապատմական հայերենին բնորոշ է եղել երաժշտական շեշտը, որի «հետքը», նրա կարծիքով, «հին հնդեւրոպական լեզուներուն մեծագոյն մասը դեռ կցուցնէ», այդ թվում՝ լատիներենը և հայերենը: Երաժշտական շեշտի առկայության դրսևորում է անշեշտ վանկում նեղ ձայնավորների (i, u) ընկնելը, իսկ «ընդարձակներու», այսինքն՝ լայների (e, a, o) պահպանվելը, որը առկա է նաև հայերենում: Հնչույթափոխության պատճառը, ըստ Պեդերսընի, ոչ թե վանկի թուլացումն է («տկարությունը»), այլ միայն «ձայնահնչման կորուստը», որն էլ հայերենում հաճախ հանգեցնում է թույլ շ ձայնավորի⁵⁰:

Ուժայի՛ն, թե՛ երաժշտական, կարևորն այն է, որ համեմատական հնդեվրոպաբանության և հայերենագիտության երկու անվանի ներկայացուցիչներն էլ հայերենի ձայնավորների հնչույթափոխության պատճառ են համարել բառային շեշտը:

Գ. Ջահուկյանը տարբերակել է հ.-ե. ձայնավորական համակարգի՝ հայերենում վերակազմավորման երեք գործընթաց՝ 1) ապաքանակայնացում (երկար ձայնավորների վերածվելը համապատասխան կարճերի)⁵¹, 2) տրադուկցիայով⁵² ուղեկցվող ապաքանակայնացում (*e, *ē և *o, *ō բուն ձայնավորների՝ ըստ երկարության հակադրության չեզոքացումը, որն ուղեկցվում է երկար ձայնավորների արտաբերության ժամանակ հնչարանի հետագա նեղացումով)⁵³, 3) ապաքանակայնացումով ուղեկցվող տրադուկցիա («վանկակազմիչ նայական և ռնգային ձայնորդների (ինչպես կարճ՝ *r, *l, *m, *n, այնպես էլ երկար՝ *r̄, *l̄, *m̄, *n̄) անցումը «a+համապատասխան ձայնորդի ռեֆլեքս» կապակցության, այսինքն՝ *r, *r̄>ar ...»⁵⁴ (հմմտ. *mr̄to->մարդ, *ml̄h->մաղթ «աղոթք» են): Այս գործընթացները, ըստ իս, ավելի շուտ վերաբերում են հնչույթային վերակազմավորումների բնույթին (*ինչպես* են դրանք տեղի ունեցել), քան թե պատճառներին (*ինչու* են դրանք տեղի ունեցել):

Ըստ էության, «ինչու»-ին պատասխանելու նպատակ են հետանդել պատմական/(տարածամանակյա) հնչույթաբանության ներկայացուցիչների (Ե. Պոլիվանով, Ռ. Յակոբսոն, Ջ. Յիպֆ, Ա. Մարտինե, Մ. Ստեֆին-Կամենսկի և ուրիշներ) առաջարկած տարբեր տեսությունները: Այդ բոլոր տեսությունների համար ընդհանուր է *հնչաշղթայում*

⁴⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 19-20:

⁵⁰ Տե՛ս **Հովեր Պեդերսըն**, Հին հայերեն լեզուի շեշտը // նույնի՝ Նպաստ մը հայ. լեզուի պատմության, Վիեննա, 1904, էջ 68-74:

⁵¹ Տե՛ս **Джаукян Г. Б.**, նշվ. աշխ., էջ 33:

⁵² Լատիներենի traductor, -ōris բառից, որը նշանակում է «տեղափոխող, փոխադրող». տերմինային արժեքը պահպանելու նկատառումով չենք փոխարինում հայերեն տարբերակով:

⁵³ Տե՛ս **Джаукян Г. Б.**, նշվ. աշխ., էջ 35:

⁵⁴ Նույն տեղում, էջ 36-37:

*հնչյունների փոխազդեցությունը հնչույթափոխության պատճառ համարելու դրույթը*⁵⁵: Նշված տեսությունների մեջ որոշակիորեն առանձնանում են, մասնավորապես, Ա. Մարտինեի և Մ. Ստեբլին-Կամենսկու տարածամանակյա հնչույթաբանական հայեցակարգերը: Առաջինը աչքի է ընկնում նյութի համակողմանի մշակվածությամբ և ամբողջականությամբ, իսկ երկրորդը հնչույթային և այլահնչակային փոփոխությունների տարբերակման գաղափարով: Ա. Մարտինեն բոլոր կարգի հնչյունական/(հնչույթային) փոփոխությունների պատճառ է համարում լեզվին բնորոշ խնայողության (կամ տնտեսման) սկզբունքը, ըստ որի՝ մարդու կազմախոսական ապարատը հակված է հնարավորինս փոքր ջանքերով արտաբերելու լեզվական/(խոսքային) միավորը («նվազագույն ճիգի» օրենքը՝ ըստ Ջ. Ցիպֆի), սակայն դա անպայմանորեն չի նշանակում բարդ միավորի, օր.՝ երկբարբառի կամ եռաբարբառի վերածում պարզ միավորի՝ ձայնավոր հնչույթի, որովհետև լեզուների պատմության ընթացքում հանդիպում է նաև հակառակ միտումը, երբ պարզ ձայնավորը վերածվում է երկբարբառի (հմմտ. մ. անգլ. *hūs* > [*haus*] *house* («տուն»), մ.վ.գրմն. *īs* > [*ais*] *Eis* («սառույց»)): Ա. Մարտինեն խնայողությունը բնորոշել է որպես «գործող ուժերի համադրություն», որը ներառում է «... և՛ ոչ օգտակար տարբերությունների չեզոքացումը, և՛ նոր տարբերությունների ի հայտ գալը, և՛ գոյություն ունեցող դրույթային պահպանումը»⁵⁶: Այլ կերպ ասած՝ խնայողությունը՝ որպես համակարգայնորեն պայմանավորված իրողություն, մի կողմից ուղղված է բաց վանդակների լրացմանը, մյուս կողմից, ընդհակառակը, համակարգից դուրս գտնվող հնչույթների դուրս մղմանը: Այդ երկու գործընթացներն էլ տեղի են ունենում հնչաշղթայում՝ որպես հնչյունների բարդ փոխազդեցության հետևանք:

Մ. Ստեբլին-Կամենսկին, տարբերակելով *հնչույթի այլահնչակային փոփոխակումը* և *այլահնչակային փոփոխությունը* որպես երկու տարբեր երևույթներ, հնչույթափոխությունը համարում է այլահնչակային փոփոխության հետևանք: Վերջինը, որ իրենից ներկայացնում է «խոսքի հնչունի ֆիզիկական փոփոխություն»⁵⁷, սկսվելով համակարգում, կարող է վերաճել շարակարգային իրողության, այսինքն՝ նոր հնչույթի: Մ. Ստեբլին-Կամենսկին այլահնչակային փոփոխություններին վերագրում

⁵⁵ Стéу Поливанов Е. Д. Статьи по общему языкознанию, М., 1968, էջ 55-134, Якобсон Роман, Принципы исторической фонологии // Избранные труды, М., 1985, էջ 116-132, նաև Վ. Ջ. Պետրոսյան, Ռ. Յակոբսոնը պատմական հնչույթաբանության հիմնադիր // «Լեզու և լեզվաբանություն», թիվ 2, 2016, էջ 16-22, Zipf G., The psychobiology of language, Cambridge, Mass., 1935, էջ 49 և հջ., Мартине А. Принцип экономии в фонетических изменениях, М., 1960, մասնավորապես էջ 129-130, նաև Վարդան Պետրոսյան, «Խնայողության սկզբունքը» և տարածամանակյա հնչույթաբանության հարցերը // «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», թիվ 1(22), 2017, էջ 25-37, Стеблин-Каменский М. И. Очерки по диахронической фонологии скандинавских языков. Л., 1966, էջ 8-10:

⁵⁶ Мартине А., նշվ. աշխ., էջ 130:

⁵⁷ Стеблин-Каменский М. И., նշվ. աշխ., էջ 9:

է հնչույթների համակարգում համաչափություն ստեղծող և քանդող գործընթացների դեր: Դրանք համակարգի ներսում տեղի ունեցող անկատելի աստիճանական գործընթացներ են, որոնք նախապատրաստում են հնչույթային փոփոխությունը: Իսկ հնչույթային փոփոխությունը ավարտուն իրողություն է, այն չի կարող լինել վիճակ⁵⁸:

Այսպիսով, վերը կատարված քննությունը հիմք է տալիս ասելու հետևյալը. 1) հին հայերենն ունեցել է 6 մենաբարբառ ձայնավոր հրնչույթ՝ *ա* (*a*), *է* (*e*), *է(ե)*, *ի* (*i*), *ո* (*o*) և *ը* (*ə*). 2) *է*-ն եղել է երկար ձայնավոր և *է*-ի հետ նրանց հակադրությունը քանակական էր. երկարությունը՝ որպես հնչույթաբանական հատկանիշ, *է*-ն կորցրել է հավանաբար 5-րդ դարի վերջին՝ նույնանալով *է*-ի հետ (*ծէս>ծես*). 3) *ու*-ն, ըստ ամենայնի, եղել է երկբարբառակերպ և պարզ ձայնավորի է վերածվել ավելի ուշ, թերևս երբ սկսվել է հին հայերենի երկբարբառների, երկբարբառակերպերի ու եռբարբառների մենաբարբառացման ու երկհնչունացման գործընթացը. 4) ձայնավորական համակարգն ունի տարասեռ ծագում. ձայնավորների մեծ մասը սերում է *հ*.-*ե*. պարզ ձայնավորներից, բացառությամբ *է*-ի, որն ունի երկբարբառային ծագում. ընդ որում՝ «օրինաչափական» ծագում ունեցող միակ ձայնավորը *է* (*e*)-ն է, որն առաջացել է *հ*.-*ե*. **e*-ից. մյուսները ծագել են տարբեր ձայնավորներից. այդ հանգամանքը այս կամ այն չափով բնորոշ է եղել նաև *հ*.-*ե*. մյուս լեզուներին. 5) հին հայերենի ձայնավորական համակարգը մեզ հայտնի տեսքըն ընդունել է *հ*.-*ե*. լեզվական ընդհանրությունից մինչև 5-րդ դար շուրջ 4 հազարամյա հոլովության ճանապարհին՝ շփվելով ինչպես հնդեվրոպական, այնպես էլ ոչ հնդեվրոպական լեզուների հետ. տարաբնույթ հնչույթափոխությունները արդյունք են ինչպես ներլեզվական բնական գործընթացների, այնպես էլ լայն առումով՝ ենթաշերտային (սուբստրատային) շփումների ու ազդեցությունների, որը, լեզվին բնորոշ խնայողության սկզբունքի համաձայն, ժամանակ առ ժամանակ հանգեցրել է *հ*.-*ե*. այս կամ այն հնչույթի որակափոխության. 6) այդ փոփոխությունները երկարատև և աստիճանական խմորումների արդյունք են. դրանք նախապես սկսվել են որպես այլահնչակային փոփոխություններ, որոնք որոշակի աստիճանում վերափոխվել են նոր հնչույթի. 7) *հ*.-*ե*. նախալեզվի համեմատությամբ ձայնավորների փոփոխությունը հայերենում կրել է համակարգային բնույթ. ապաքանակայնացման գործընթացի արդյունքում վերացել են երկար ձայնավորները, որոշ բառերում ոնգային *ն(ո)*-ին նախորդող դիրքում *հ*.-*ե*. **a* և **e* ձայնավորները թուլացել են՝ վերածվելով *ը(ə)*-ի. մեկ բառում *ը(ə)* է տվել *հ*.-*ե*. **o*-ն (*ըստ<*posti*). հին հայերենի *ը(ə)*-ն ծագումնաբանական կապ չունի *հ*.-*ե*. շվայի (**ə*/**ɛ*) հետ. ըստ էության՝ այն նոր հնչույթ է հայերենի ձայնավորական համակարգում:

⁵⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 8-10:

Բանալի բառեր – *ձայնավորական համակարգ, երկար ձայնավոր, երկբարբառակերպ, հին հայերեն, հնդեվրոպական շվա, հնչարանական արժեքայնություն, տարասեռ ծագում*

ВАРДАН ПЕТРОСЯН – Происхождение и фонематическая значимость системы гласных в древнеармянском языке. – Система гласных в древнеармянском языке, ведя свое начало из индоевропейского праязыка, претерпела качественные изменения. Так, 1) древнеармянский язык, как и индоевропейский праязык, имел 6 гласных фонем: *u* (а), *ɛ* (е), *ɛ̄* (ē), *ɪ* (і), *o* (о) и *ɹ* (ə), однако из армянского исчез класс долгих гласных, присущих индоевропейскому; 2) *ɛ̄* была долгой гласной (ē), но происходит не от индоевропейской *ē, а от дифтонгов *ei и *oi; 3) как первая (*ə), так и вторая (*ɛ) индоевропейская шва в армянском дали *u*(a); *ɹ*(ə) армянского является редукцией основных гласных *a, *e и *o индоевропейского *u*, по существу, представляет собой новую фонему в системе гласных армянского языка; 4) по-видимому, *ɪ* была дифтонгоидом, решающим в вопросе организации качественной характеристики которого было её происхождение от долгих гласных *ū и *ō, а также позиции, предшествующей назальной *o; 5) "закономерное" происхождение имеет только *ɛ* (e) (<и> *e), остальные произошли от различных гласных: это обстоятельство в той или иной степени характерно и для других индоевропейских языков.

Ключевые слова: *вокализм, долгий гласный, дифтонгоид, древнеармянский язык, индоевропейская шва, фонематическая значимость, гетерогенное происхождение*

VARDAN PETROSYAN – The Origin of the Vowel System of Old Armenian and its Phonemic Value. – Having originated from the Indo-European vowel system, the old Armenian vowel system, in fact, has undergone qualitative changes. Thus, 1) Old Armenian, as well as the Indo-European proto-language had 6 vowel phonemes *u* (a), *ɛ* (e), *ɛ̄* (ē) *ɪ* (i) *o* (o) and *ɹ* (ə). However, the class of the Indo-European long vowels has disappeared in Armenian. 2) *ɛ̄* was a long vowel (ē) but it stems from the diphthongs *ei and *oi and not from the Indo European *ē 3) Both the first (*ə) and the second (*ɛ) Indo European shva turned into the Armenian *u* (a) while the Armenian *ɹ* (ə), being a new phoneme in the Armenian vowel system, was the result of the reduction of the basic Indo-European vowels *a, *e and *o 4) *ɪ* used to be a diphthong and the formation of its qualitative character, most probably, depends on the fact that it derived from the Indo-European long vowels *ū and *ō preceding the nasal position. 5) Only *ɛ*(e) (<I.E *e) had a "standard" origin. The others were derived from various vowels. This phenomenon, to varying extents, is typical of other Indo European languages, as well.

Key words: *vowel system, a long vowel, a diphthong, Old Armenian, Indo-European shva, phonemic value, heterogeneous (mixed) origin*